Անհամական իռնների ակտիվության գործակիցներից ոգումբեր Յեղանակը կարելի յե ցուցադրել հաջողելով դժվար լուծելի աղի լուծելիությունը այլ երեկորդիտների լուծություներում: Որինակ՝ բարիում յոդատի լուծելիությունը ջրում $C = 25^{\circ}$ -ում մոտավորապես հավասար է $8 \cdot 10^{-4}$ մոլի մեկ լիտրում: Հավասարակշռությունն այս դեպքում հետեւան է:



Աւատի բարիումի յոդատի հավեցած լուծույթի իռնական ուժը հազարոր է $2,4 \cdot 10^{-3}$: Խառնրազունություն 29 աղյուսակի տվյալները բարիում-իռնի և յոդատ-իռնի ակտիվության գործակիցների համար, մենք կդանենք 0,72 և համապատասխանըն 0,96: Այսաեղից լուծելիության արտազրյալը K պետք է հավասար լինի:

$$(0,72 \cdot 8,0 \cdot 10^{-4}) / (0,96 \cdot 16,0 \cdot 10^{-4})^2 = 1,36 \cdot 10^{-3}$$

Արդ՝ ընկենք բարիումի յոդատի լուծելիությունը կալիումի նիտրատի 0,1 մոլար լուծույթի մեջ: Քանի վոր կարծր բարիումի յոդատը լուծույթի հետ դիպաման մեջ լինելով, չե փոփոխվում, նա պետք է ունենալ նույն ակտիվությունն, ինչ վոր տառի: Աւատի լուծելիության արտազրյալը կմնա անփոփոխ ինչ բարիում և յոդատ իռնների ակտիվության գործակիցները կալիումի նիտրատի ներկայությամբ կնվազնան կալիումի նիտրատի իռնական ուժը հավասար է 0,1-ի, իսկ բարիումի յոդատի իռնական ուժը, կալիումի նիտրատի համապատասխան ուժի համեմատությամբ այնքան փոքր է, վոր այս կարելի յե արհամարել: Այս պատճառով ել, 29 աղյուսակի հիման վրա, բարիումի իռնի ակտիվության գործակիցը հիմա հավասար է 0,30, իսկ կալիումի համար՝ 0,80: Տեղադրելով այս արժեքները լուծելիության արտազրյալը հավասարման մեջ, ստանուամ ենք:

$$(0,30m) (0,8 \cdot 2m)^2 = 1,36 \cdot 10^{-3}$$

$$m = 1,21 \cdot 10^{-2} \text{ մոլ/լիտր}$$

Այսպես ուշնին այս դեպքում բարիումի յոդատի լուծելիությունը ավելանում է: Մյուս կողմից բարիումի նիտրատի լուծույթում բարի-


ումի յոդատի լուծելիությունը համանում իրնի աղջեցության պատճառով կազմակերպի Դիբուկ թե բարիումի նիտրատի 0,03 մոլար լուծույթ ունենք: Այս ժամանակ իրնական ուժը հավասար է 0,09, վորտեղից ըստ 29 աղյուսակի՝ ակտիվության գործակիցները հավասար են բարիում-իրնի համար 0,32 և յօդատ-իրնի համար 0,81-ի: Տեղադրելով այս մեծությունները ստանում ենք՝

$$(0,32 \cdot 0,03) (0,81 \cdot 2\text{m})^2 = 1,36 \cdot 10^{-9},$$

$$\text{m} = 2,33 \cdot 10^{-4} \text{ մոլ/լիտր:}$$

Յեթև բարիումի քլորիդի լուծելիության հաշվումը տարրեր գեղցերի համար ըստ 29 աղյուսակի կատարելու վորխարեն, լուծելիությունը այդ գեղցերի համար փորձնական յեղանակով վորոշենք, ապա գնալով հակառակ ուղղությամբ մենք կարող ենք հաշվել 29 աղյուսակում գտնվող շարժեցները: Ճիշտ այդ յեղանակով գտնված են աղյուսակում բերված մի քանի մեծությունները:

Անօխացման—Շեղակցման շեղակցմանը հավատակությունը խնմների միջևն—Նորպես որինակ այս տիպի հավասարակցության, ուսումնասիրները արծաթ-իրնի բեղուկցման բեակցիան յերկվալենտ յերկաթ-իրնով:



Խ զիսում մենք ցույց կտանք այս կոնստանտը հաշվելու յեղանակը: Ստացված այս կոնստանտի մեծությունը հավասար է մոտավորապես 10-ի: Դժվարությունն այսուղ յերկվալենտ յերկաթ-իրնի ակտիվության գործակցի վորոշման մեջ և: Մենք կարող ենք ընդունել վոր յերկվալենտ և յեղակաթ-իրների վերաբերմամբ միմույն մոլայնության լուծույթներում յեղակաթ-իրնի ակտիվության գործակցը կազմում և յերկվալենտ յերկաթ-իրնի ակտիվության գործակցի յերկու յերրորդը: Տեղադրելով այս մեծությունը, ստանում ենք՝

$$\frac{\gamma_2}{[\text{Ag}^+]} = 10;$$

$$[\text{Ag}^+] = 0,067,$$

Սա համապատասխանում է մոտավորապես 0,8 մոլայնության արծաթ իրնի համար:

Ակտիվության գործակցը յերբեմն անվանում են դիսոցմոն թե մոդինումի կական աստիճան: Առկայն այդ չպետք է շփոթել իսկական դիսոցման աստիճանի հետ, վորը սովորաբար

մենք նրանակում ենք ու տառով օերե վորեն ելեկորովիս
ջրի հետ իդեալական լուծույթ տար, ակախվության զրծակվոց
հավասար կիրական իսկական զիսոցման աստիճանին: Ուժեղ
ելեկորովաների համար, անզերջ նոսրացման գեպքում, ինչպես
ու, անողեն և շնորհական են 1-ի, Ազելի կոնցենտրած
լուծույթների համար Դ սովորաբար մեկից խիստ տարրերված ե, բնչ
վոր ակներեն և դարձնում, վոր այստեղ շեղումն իդեալականությունից
շատ մեծ ե, քանի վոր ուժեղ ելեկորովաների համար և միշտ ել մոտ
և մեկին: Սակայն մենք ցույց կտանք, վոր թույլ ելեկորովաների
գեպքում Դ-ի մեծությունն ինչպես վերջինս վերը սահմանվեց կարող և
շին շատ մոտ լինել:

Եւածույթի հավասարակօռուրյալը յերկու կարծ ազետի ենք: — Այս-
աեղ կարելի յե ուսումնասիրել նայե անողիսի մի դեպք, յերը լու-
ծույթը հավասարակշռության մեջ և յերկու կարծը ազերի հետ:

Դիցուկ ունենք մի լուծույթ, վոր B^+ ընդհանուր իոն ունեցող
BA₁ և BA₂, յերկու կարծը դժվարացնույժ ազերի հետ զիսոցման մեջ և:
Ազերից յուրաքանչյուրն ունի լուծելիության իր արտադրյալը՝

$$[B^+] [A_1^-] = K_1,$$

$$[B^+] [A_2^-] = K_2,$$

Թանի վոր B^+ -ի ակտիվությունը յերկու ազերի համար նույնն է,
ողա վերոհիշյալ հավասարութերից B^+ -ն արտաքսելով կստանանք

$$\frac{[A_2^-]}{[A_1^-]} = \frac{K_2}{K_1}.$$

Այս հավասարումից կարելի յե ոգտվել որինակ մի դժվարացնույժ աղ
նատրիումի կարբոնատվ մշակելիս կարբոնատի վերածվելու աստի-
ճանը հաշվելու համար:

Դրայ-Հյուկելի անուրբալը: — Վերջին տարիների ընթացքում
ֆիզիկոքիմիկուները նշանակալի ուշագրություն են նվիրել Դըրայ-
Հյուկելի՝ ուժեղ ելեկորովաների թեորիային: Դըրայ և Հյուկելը
կիմիատիկ թեորիան և ելեկորոստատիկ պատեհացիալ ուսմունքը կիրա-
ռել են ուժեղ ելեկորովաների լուծույթներին: Նրանց ստացած ար-
դյունքները մաթեմատիկական ֆիզիկայի փայլուն հազթանակ և հան-
գիսանուում նրանց թեորիան արդարացնում ե իոնների վարքի վորակա-
կան պատկերն ուժեղ ելեկորովաների լուծույթներում, վորը մենք
վերը տվինք: Այդ թեորիան, ինչպես կիմիետիկ թեորիայի բոլոր կիրա-
ռութեալը, սուսպառ չթույլատրող յենթազրություններից ազատ և միայն
ահմանային պայմանուում, վորն այստեղ համապատասխանում ե անսահ-
ման նոսրացմանը: Ազելի կոնցենտրած լուծույթների համար անհրաժեշտ

և յինթաղբություններ անել իրնների հիմքեկտիզ արամադի և, ուժեղ եղեկարուստաիկ դաշտերի ազգեցության տակ, շրի դիելեկտրիկ կոնս- անուսի փոփոխման վերաբերյալ, Գործնական տեսակետից Դըրայ- Հյուկելի թեսրիայի ամենախոչոր արժեքը կայանում է նրանում, վոր առ մի հավասարում և առաջ առանձին իրնների ակտիվության գործակիցները լուծույթներում վորոշելու համար։ Այս հավասարումը հետևյալն է՝

$$\log \gamma = -K_2 \gamma^{\nu} \quad (18)$$

վորտեզ է իրնի լիցքն և իրկ ու լուծույթի ընդհանուր իրնական ուժը K_2 է 0° -ում հավասար է $0,489$, 25° -ում՝ $0,504$ -ի։ Սա մի յերեսիլի թերուկան պատճեացում և ընձեռում է յուկսի և Ռինզելի փորձնական համապարհով արտացած անհատական իրնների ակտիվությունների ընդհանրացման։

Եաւ հեղինակներ իրնների ակտիվությունները Դըրայ-Հյուկելի թերուիչի անսակեռով քննելիս մոլայնության փոխարեն գործ են ածում-հավալային կոնցենտրացիան։ Ըս և համապատասխան ակտիվու- թյունները նշանակում են ի-ով, դ-ի փոխարեն։

Թուլ կենսագույներ... Իննենք մի տիպի հավասարակշռություն, վորի ներկայացուցիչը քացակական թթվի դիտումն է՝

$$HA + H^+ + A^- \quad (19)$$

Հավասարակշռությունը տեղի ունենալու համար, ինչպես առաջ քննված և կալիումի քլորիդի դեպքում, մենք պետք և ունենանք՝

$$\frac{m_H^+}{m_A^-} = K \quad (20)$$

Եեթե կոնցենտրացիաների փոխարեն մենք տեղադրենք նրանց նշանակությունները (5) հավասարումից և համապատասխան պարզե- ցում կատարենք կատանանք Ոստվարդի նորուցման որենքը։

$$\frac{m_H^+}{m_A^-} = K \quad (21)$$

Խ զիմում մանրամանորեն նկարագրած յեղանակով՝ ելեկ- տրատարության տվյալներից մենք կարող ենք հաշվել ա, Եեթե այդ կոտարված և, քացակական թթվի դիտումն կոնցենտրացիան համար ստացվում են 30 աղյուսակում բերված արժեքները, Դիտուման կոնս- տանտի անփոփոխությունը 1,0 մոլարից դաժը կոնցենտրացիաների համար, յերբ լուծույթների խոտորումն իդեալականությունից անհան ե, արդարացնում և այն կարծիքը, թե իրոք վոշ-իրնացած մոլեկու- ների և իրնների միջև դոյլությունը ունի հավասարակշռությունը։

Աղյուսակ 29. Դաշտական բրիլ պիտոցման ինիմանը C 20%-ում

Մարդությանը	K. 10 ⁻⁵
1,0	2,40
0,35	2,70
0,13	2,81
0,001	2,84

Այս տիպի նյութերը ստացել են թույլ ելեկ ու քոչիտներ անունը, վորովնեռեւ բուլոր գեղքերում, բացի շատ ուժեղ նորացումներից նրանց պիտոցմանը համեմատաբար վոր են:

Եթե կտրատարության հիման վրա հաշված պիտոցման կոնստանտները մի քանի ելեկտրոլիտների համար բերված են 32 աղյուսակում:

Աղյուսակ 32. Կիսուցման կոնստանտները

Բ բ ա ւ ն ե ր	K	Բ բ ա ւ ն ե ր	K
HCOOH	2 · 10 ⁻³	H ₂ PO ₄ ⁻	2 · 10 ⁻¹
CH ₃ COOH	1,8 · 10 ⁻³	HPO ₄ ²⁻	10 ⁻¹¹
C ₂ H ₅ COOH	1,8 · 10 ⁻³	HCl	1,8 · 10 ⁻⁹
C ₆ H ₅ COOH	6 · 10 ⁻³	H ₃ BO ₃	6 · 10 ⁻¹⁰
Cl ₃ CH ₂ COOH	1,6 · 10 ⁻³	C ₆ H ₅ OH	10 ⁻¹⁰
HC ₂ O ₄	3,5 · 10 ⁻¹	2 կ ժ շ ե ր	
HCO ₂	5 · 10 ⁻¹¹	NH ₄ OH	1,8 · 10 ⁻⁸
C ₂ PO	10 ⁻³	C ₆ H ₅ NH ₂ OH	5 · 10 ⁻¹⁰

Հետազայտման քննարկիվելիք թույլ ելեկտրոլիտները գլխավորապես թթուներ և հիմքներ են, վորոնց պիտոցման հետեւանքազմ մեկ մոլեկուլից զոյանում և միայն յերկու խոռն Այսպես որինակ, թույլ յերկնեմն թթվի պիտոցման դեպքում մենք կուտամասիրմանը միմիայն մեկ ջրածին խնի գիտոցումը Ընթերցողը կարող է հետաքրքրվել, թե որոյն թյուն ունեն ելեկտրոլիտներ, վորոնք ընկնում են մեր կլասիֆիկացիայի յերկու խմբերի՝ շումենց և «Թույլ» ելեկտրոլիտների միջև։ Մի քանի այսպիսի նյութեր հայտնի յեն, սակայն միշտներայ գնովքերն ավելի սակագ են պատահում, քան այդ կարելի յեր սպասել:

Փախեարեարուրյան ազատ հներգայի շնչ ակտիվության միջնիւ— V գլխում մոլոր ազատ հներգիան կապվեց պարզիւալ ճնշման հետ գաղաւյին վիճակում (27) հավասարման միջոցով։ Նման մի հավասարումով ինչնի ազատ հներգիան լուծույթում կապվում է ակտիվության հետ։ XI գլխում մենք կատար այդ հավասարումը, վորովես ակտիվության գաղափարի սահմանում։ Այդ հավասարումը նույն և ինչ վոր V գլխի (27) հավասարումը, բացի այն վոր նրանում պարզյալ ճնշման տեղ դրված և իննների ակտիվությունը։ Այդ հավասարումը հետեւյալ ե՝

$$\bar{F} = RTIn (t_0) + C \quad (22)$$

վորանու Ս կոնստանտի մեծությունը կարելի յե ընտրել կամայար

Հարմարեցնելով այն ստանդարտ վիճակի հետ ինչպես այդ բացառը վաճ և V գիտում:

Ակտիվուրյան գործակցի յև դիստրին խնդիրան առաջնամբ նույնայնուրյան քայլ Եղիշերովէնութի համար նոր լուծույթներում— Իդեալական լուծույթը կարելի յև սահմանել վորպես մի լուծույթ, զորի մեջ ինքը զինաներից յուրաքանչյուրի ակտիվությունը հավասար է նրա մոլայնության: Կարելի յև իդեալականի մոտիկ վարք սպասել թույլ ելեկտրոլիտների նոսր լուծույթներում, քանի վոր այստեղ իննների իննցնատրացիաներն արտակարգ կերպով փոքր պեսք և լինեն, իսկ ինններն ան հատկապես, վոր իրենց ելեկտրական լիցքների շնորհիվ առաջնամբ են ամենառուժեղ շեղումն իդեալականությունից: Զդիտոցված մոլեկուլները նոսր լուծույթներում նկատելի շեղում ցույց չին տալիս իդեալականությունից:

Թույլ թթվի դիտոցման համար, որինակ, մենք կունենանք հետեւյալ հավասարակշռությունը:



Հավասարակշռության մեջ



Լուծույթում գտնվող զանազան տեսակ մասնիկների մոլայնությունները վորոշվում են հետևյալ կերպ՝ $(1-\alpha) m_0$ չդիտոցված մոլեկուլների համար և αm_0 խոններից յուրաքանչյուրի համար:

Յեթե ընդունենք, վոր դործ ունենք իդեալական լուծույթի հետ, ապա (22) հավասարումը մասնիկներից յուրաքանչյուրի համար տալիս է՝

$$\bar{F}_{\text{HA}} = 1/(1-\alpha)m_0 C + T$$

$$\bar{F}_{\text{H}}^+ = RT \ln(\alpha m_0) + C, \quad (25)$$

$$\bar{F}_{\text{A}}^- = RT \ln(\alpha m_0) + C.$$

Ելեկտրոլիտի լրիվ աղաւ եներգիան լուծույթում մեկ մոլի համար հավասար և տարբեր տեսակի մասնիկների աղաւ եներգիաների դուժարին՝

$$F = (1-\alpha) \bar{F}_{\text{HA}} + \alpha \bar{F}_{\text{H}}^+ + \alpha \bar{F}_{\text{A}}^-. \quad (26)$$

Համապատասխան մեծությունները անդադրելով (24) և (25) հավասարութիւնից, ստանում ենք՝

$$F = 2RT \ln(\alpha m_0) + C'. \quad (27)$$

Եսկ յեթե մենք թույլ ելեկտրոլիտի ակտիվությունը վորոշնք այսպես, ինչպես արինք ուժեղ ելեկտրոլիտների համար, այսինքն, հա-

Համարեցնելով այն իր իրանակների ակտիվությանը, մենք պետք եւ ստանանք՝

$$F = 2RT\ln(\gamma m) + C'. \quad (27)$$

Դամայար վերցրած կոնստանտը C' յերկու հավասարութերի համար ել պետք եւ ընտրվի մինչույն յնպահակով, Այսպիսով մենք տեսնում ենք, որ իզեալական լուծույթի համար (27) և (27a) հավասարութերը պետք եւ նույնը (իդենտիկ) լինեն թույլ ելեկտրոլիտի գեղջում ակտիվության գործակցի պոխարին, առանց դդալի սխալի, կարելի յեւ ոդավել դիտողման աստիճանով, իսկ, այս գեղջում ինչպես ասվեց՝ դիտողման աստիճանը կարելի յեւ վորոշել բավական ստույգ կերպով։ Այս հանգամանքի շնորհիվ ակտիվության գործակցով ուղարկում են զվարդուրապես ուժեղ ելեկտրոլիտների գեղջում, վորոնց համար դիտողման աստիճանը, նույնիսկ յեթե մենք կարողանայինք վորոշել այն, մեղ վոչինչ չեր կարող աար

Եվսկրալիսների նույն լուծույթների կարծրացման կերպ շնորհ ակտիվության գործակցը։— Կարծրացման կետի անկումը ջրային նոսր լուծույթների համար տրվում է.

$$\Delta T = 1,858 \text{ m.} \quad (28)$$

Հավասարումով։

Յեթե π_0 թույլ ելեկտրոլիտի մոլայնությունն է, ապա լուծույթում զանգում է (1- α) π_0 մոլ չդիտողված ելեկտրոլիտ և 2α մ, մոլ իրաները հետեւար ընդհանությունը հավասար կլինի (1+ α) π_0 , (28) հավասարումը կդառնա։

$$\Delta T = 1858 (1+\alpha)\pi_0. \quad (29)$$

Իր ժամանակին Վանտ-Հոֆֆը նկատել եր ելեկտրոլիտների լուծույթների կարծրացման աննորմալ անկումը Մինուոյն կոնցենտրացիայով ելեկտրոլիտի և վոչ ելեկտրոլիտի լուծույթների կարծրացման կետերի անկումների հարաբերությունը նաև նշանակել եւ տառվկայությունը ստացել եւ Վանտ Հոփֆի գործակությունը (29) արտահայտության հավասար եւ

$$1 = 1 + \alpha. \quad (30)$$


Սակայն այս հարաբերություններն իրավացի յեն միայն թույլ ելեկտրոլիտների նոսր լուծույթների համար։ Ուժեղ ելեկտրոլիտների համար մենք պետք եւ տեղադրենք ակտիվության գործակցը, Այն ժամանակ բինար ելեկտրոլիտների շատ նոսր լուծույթների համար հավասարումն ստանում է հետեւյալ տեսքը¹⁾

$$\delta T = 3,72 \text{ mdln} (\gamma m). \quad (31)$$

¹⁾ Այս հավասարման արտածումը տես Lewis Randall, Thermodynamics.

Համապատակության մեջ մասմակցում են ջրի խալին-
րա թուրք գորպես ենեկության—Այս զվարաւմ մենք մինչև հիմա ջուրը դի-
տում ենքինք փորպես միայն լուծիչ, բայց և այնպես, թույլ թթուների
կամ հիմքերի աղերի ներկայությամբ, չըի դիտոցումը ստանում և շատ
մեծ նշանակություն:

Ջուրը դիտոցվում եւ ըստ հետեւյալ համաստրժան:



$$[\text{H}^+] [\text{OH}^-] = K_w. \quad (33)$$

Չըի դիտոցման կոնստանտի արտահայտության մեջ ջուրը նեկառ-
վում է վորպես մաքուր հեղուկ: Այս յենթազրությունը լիազեն ար-
գարացի յեւ, յեթե վորեւս այլ նյութեր բացակայում են: 25° ահմագե-
րատուրում K_w -ի նշանակությունը մոտավորապես 10^{-14} է: Սա նշանա-
կում եւ, վոր այն գեպքում, յերբ ուրիշ իօնները ներկա չեն՝ ջրածին և
հիմքութիւն իօնների ակրոխվություններն առանձին-առանձին համաստր
են 10^{-14} -ի, վորովհեան զրական և բացասական իօնները պետք և հա-
մաստր քանակություններուն ներկա լինենք: Վամանի վոր $0,001$ արյայնու-
թյունից ցածր ամեն կոնցենտրացիայի համար Դ կարելի յեւ ընդունել
համաստր մեկի, ապա 10^{-7} ներկայացնում եւ ջրածնի և հիմքութիւնի
զրամ-իօնների իսկական թիվը 1000 զրամ ջրում: Գրամ-իօնն ասելով
համականում ենք զրամներով արտահայտված իօննի մոլեկուլար կշիռը:
Այսպես, որինակ, հիմքութիւնը մեկ զրամ-իօնը համաստր է $17,008$ զրամ:

Թթուների և հիմքերի բնորոշ հատկությունները կախված են՝
նրանց լուծույթներում դիտոցման հետևանքով գոյացած ջրածին և,
համապատասխանորեն, հիմքութիւն իօններից: Այս պատճառով ջուրը
պետք է վարվի և վորպես թթու և՝ վորպես հիմք, Սակայն մաքուր
ջուրն այնքան քիչ և պարունակում է մեկ և մյուս իօնները, վոր զրամ-
կերպով չի զրսեվորում վեչ թթու վեչ հիմնային հատկությունները:

Շատ փոքր թվերը 10^{-4} բացասական աստիճանով արտահայտե-
լու յեղանակը մի քիչ անհարմար կլիվա միայն մինչև սովորություն
դառնալու Սակայն նշանակման այս բացը լրացնելու նպատակով Զյու-
րենսենը ջրածնի իօննի կոնցենտրացիայի համար մացրել և թիւ մեծու-
թյունը թիւ 10^{-4} ջրածնի իօննի կոնցենտրացիայի համար մացրել և թիւ
կան լոգարիթմ եւ Այս նշանակումով լայնորեն ոգավում են Փիզի-
կո-քիմիայի հետ առնչություն ունեցող գիտություններում:

$$\text{pH} = -\log \text{m}^+$$

32 աղյուսակը տալիս է աղաթթվի և նատրիումի հիմքութիւնի
ջրային լուծույթների ասրերը կոնցենտրացիաներին համապատաս-
խանող pH, $[\text{H}^+]$ և $[\text{OH}^-]$ նշանակությունները: Խչպես թթու, այն-
պիս ել հիմնային լուծույթների կոնցենտրացիաներն ընդունված է
բնութագրել $[\text{H}^+]$ -ի համապատասխան նշանակություններում:

[H ⁺]	[OH ⁻]	pH	
HCl-ի մոլայնությունը			
1	10 ⁻¹⁴	0	1,3
10 ⁻¹	10 ⁻¹	1	0,125
10 ⁻²	10 ⁻¹²	2	0,0125
10 ⁻³	10 ⁻¹¹	3	0,001
10 ⁻⁴	10 ⁻¹⁰	4	0,0001
10 ⁻⁵	10 ⁻⁹	5	0,00001
10 ⁻⁶	10 ⁻⁸	6	0,000001
10 ⁻⁷	10 ⁻⁷	7	Մաքսր չուց
NaOH-ի մոլայնությունը			
10 ⁻¹	10 ⁻¹⁴	8	0,000001
10 ⁻²	10 ⁻¹³	9	0,00001
10 ⁻³	10 ⁻¹²	10	0,0001
10 ⁻⁴	10 ⁻¹¹	11	0,001
10 ⁻⁵	10 ⁻¹⁰	12	0,011
10 ⁻⁶	10 ⁻⁹	13	0,125
10 ⁻⁷	1	14	1,3

Եթեր հաշվմնաք հավասարակշռությունները, վորոնց մեջ ջրի իոնաներն են տառնակցում, մենք դորձ կունենանք առվորաբար չափավոր նույն բաժանյթների հետ (1,0 տ պակաս): Բացի այդ, առվորաբար մենք կրավարարվենք միայն հաշվարկման արդյունքի մեծության կարգը վորոշելով: Սա տառնձնապես արդարացնի յե, յեթև մենք հաշվարկում ենք ջրածնի իոնի ակտիվությունը բաւֆերային լուծույթներում կամ տիտարման խկանան վերջնակերպ վորոշելիս: Վերջին հաշվով ջրի և զանուզան թույլ թթուների ու հիմքերի դիտոցման կոնստանտները, վորոնցով մենք սպավելու յենք մեր հաշվարկությունը, կարող են նշանակալի սխալներ պարունակել: Ուստի այս գլուխ հնատապն մասերում, բարդ ֆորմուլներից խուսափելու համար, ամեն տեղ ակտիվության բալոր դորձակիցները մենք կնողունենք հավասար մեկի: Սովորաբար ակտիվության գործակիցները 0,5-ի և 1,0-ի միջև ընկած մեծություններ են, բացի այդ, ֆորմուլաներից նրանք հաճախ արտաքընտվություն են: Հետեւապես, մեր յենթադրությունը հաշվարկելի մեծության կարգի վրա չի անդրադառնա: Սակայն, շփոթությունից խուսափելու համար, մենք կմտցնենք նոր սիմվոլ՝ (H⁺), վորը ովեաք և արտահայտի ջրածնինի և՝ մոլայնությունը և՝ ակտիվությունը, քանի վոր ակտիվության գործակիցը մենք ընդունում ենք հավասար մեկի: Սակայն, վորպեսզի հավասարությունը, վոր մենք դուքս ենք բերելու

միանգամայն ճիշտ լինեն, հարկավոր և միայն (H^+) սիմվոլը մնիսաւրանել վորպիս ակտիվություն՝ հավասարակշռության պայմանները արտահայտող հավասարությունների մեջ և վորպիս մոլախություն՝ ստյուխոմետրական հարաբերությունների մեջ վորպիս ստյուխոմետրական փոխարարերությունների որինակ՝ լուծույթներում մենք կնշենք հետեւյալ ֆակտը. լուծույթում բոլոր դրական իոնների ընդհանուր մոլախությունը միշտ պետք և հավասար լինի բացասական իոնների ընդհանուր մոլախության. Այս հավասարությունը պարզապես լուծույթի չփոփոլթյան պայմանն է, վորը ելեկտրոքիմիական բոլոր տեսությունների հիմնական նախադրյան և հանդիսանում:

Աղերն ընդհանրապես ուժեղ ելեկտրոլիմիաներ են, ուստի պետք և ընդունել, վոր նրանք լուծույթներում լինի դիտողված են: Աղը կարելի յի սահմանել, վորպիս մի նյութ, վորը լածված վիճակում գոյացնում և վորեն դրական իոն, բացի ջրածնի իոնից և վորեն բացասական իոն, բացի հիդրոքսիլ իոնից: Վորպիս սահմանում, վորը կիրառելի յի վոչ միայն ջրային լուծույթներին, այլև և լուծույթներին այլ լուծիչներում, կարող ենք ասել, թե թթուները նյութեր են, ուորոնք ջրածնին իոններ են անջատում իրենցից, իսկ հիմքերը նյութեր են, վոր միանում են ջրածնին իոնների հետ և թթվի և հիմքի միջև յեզած փոխարարերությունը կարելի յի արտահայտել հետեւյալ սինհայուն¹⁾.

H^+ —հիմք

(33)

Ավելի նեղ սահմանումը, վորը կիրառելի յի միայն ջրային լուծույթներին, հիմքերը նյութեր են, ուորոնք գոյացնում են հիմքութել իոններ:


Թույլ բրունից չեզ բույլ հիմներից գոյացած ապերի հիմքալիքը Ուժեղ հիմքերից և թույլ թթուներից գոյացած ապերի լուծույթները ցույց են տալիս ակալային սեակցիա: Բանի վոր ակալային սեակցիան ցուցում և ազատ հիդրոքսիլ իոնների ներկայությունը, պարզ և, վոր այդ իոնները լուծույթում պետք և գոյանան ջրից:

Վերը հիշված ջրի դիտողման հավասարակշռման (32) հավասարությունը պես գիտենք, վոր լուծույթում հիդրոքսիլ իոնների կոնցենտրացիան կարող և ավելանալ միմիան ջրածնին իոնների կոնցենտրացիայի միաժամանակյա նվազումը: Այս նվազումը կարող է անելի ունենալ միամիայն ջրածնին-իոններն աղի անիոնների հետ միանալու հետևանքով: Այսպիս գոյացած չիմիոցված թթվային հատկությունները ցույց չեն տալիս: Ցեղե մենքը գործ ունենք ուժեղ թթվից և թույլ հիմքից գոյացած աղի հետ, ապա նրա լուծույթը թթու ուեակցիա յի


¹⁾ Brönsted. Zeit. physik. Chem. 108, 192 (1924).

առաջին Բացասարությունը միանգամայն նման և վերը բերածին, այս առարկերությամբ միայն, վոր այսուեղ ջրածին և հիգրոգրիդ խռները փոխանակվում են իրենց զերերով:

Հիգրոլիպիտ ախտական ռեակցիայ յէ հետևյալը՝




Այս ռեակցիայի ելությունը յիշում և հետևյալ քիմիական հավասարակշռությանից՝



գորը կազմած և ջրի գիտուման հավասարակշռության հետ [հավասարում] (32):

Աղի հիգրոլիպիտ հավասարակշռությունը նեշտ և հաշվարկելը Ուսումնական այժմ ուժեղ հիմքից և թույլ թթվից գոյացած BA աղի գեղթը: Հավասարակշռության մեջ լուծույթում, բացի ջրից, ներկային BA⁺, OH⁻ իռնները և չպիտօքված HA թթուն: Մենք ունենք հետևյալ հավասարակշռությունը:



$$\frac{(\text{HA})}{(\text{H}^+) \text{A}^-} = \frac{1}{K_A}, \quad (35\text{a})$$

ոյլ և ջրի գիտուման հավասարակշռությունը՝

$$(\text{H}^+) (\text{OH})^- = K_w$$

Թող մոլեկուլար աղի ընդհանուր մոլայնությունը լինի (հաշված այն յենթագրությամբ, վոր ամրող աղը գտնվում և չգիտոցված մոլեկուլների ձևով): այն ժամանակ հիգրոլիպիտ առաջնանը և հեղաղրելով ստանում ենք՝

$$\text{hm}_0 = (\text{HA}) - (\text{OH}^-), \quad (36)$$

$$\text{բայց } \text{վարում} \quad (1-h)\text{m}_0 = (\text{A}^-). \quad (37)$$

(32 ա), (36) և (37) հավասարութենք (H⁺), (H⁻) և (HA) նշանակությունները (35 ա) հավասարում մեջ աղեղաղրելով ստանում ենք՝

$$\frac{\text{K}_w}{\text{hm}_0} \frac{\text{hm}_0}{(1-h)\text{m}_0} = \frac{1}{K_A} \quad (38)$$

$$\text{կամ } \frac{h^2\text{m}_0}{1-h} = \frac{\text{K}_w}{K_A}. \quad (39)$$

Նման մի հավասարում և ստացվում նաև թույլ հիմքով և ուժեղ թթվով գոյացող աղերի համար.

$$\frac{\text{h}^2\text{m}_0}{1-h} = \frac{\text{K}_w}{K_B}. \quad (40)$$

Խոչպես յերևում և հիդրոլիզի յենթարկված աղի հարաբերական բաժինը յերկու դեղքումն ել պիտի և ամի լուծույթի նորացման նույն դնությունը, յերբ աղը գոյացել և թույլ թթվից և թույլ հիմքից, հիդրոլիզի աստիճանի համար ստացվում է մի քիչ տարրեր արտահայտություն:

Թթվի և հիմքի դիմացման հավասարակշռության պայմանները, համապատասխանողներն, արտահայտվում են հետևյալ հավասարութեառով՝

$$\frac{(HA)}{(A^+)} = \frac{(H^+)}{K_A}, \quad (41)$$

$$\frac{(BOH)}{(B^+)} = \frac{(OH^-)}{K_B}. \quad (42)$$

Բազմապատկելով (41)-ը (42)-ով և արտաքանակ (H⁺) և (OH⁻) (32a) հավասարման ողնությամբ, ստանում ենք՝

$$\frac{(HA) BOH}{(A^-)(B^+)} = \frac{K_w}{K_A K_B}. \quad (43)$$

Այս դեղքում հարապար են հիդրոլիզի յերկու ու աստիճանները, վերոնք վորոշվում են հետևյալ հավասարութեառով՝

$$h_A m_0 = (HA), \quad (44)$$

$$h_B m_0 = (BOH). \quad (45)$$

Սրա հետ մեկանոյ, քանի վոր ջրածնի և հիդրոքսիլի բոլոր իոնները պետք ե ստացվեն ջրից, մենք ունենք հետևյալ ստյուխունեարական հարաբերությամբ.

$$(H^+) + (HA) = (OH^-) + (BOH). \quad (46)$$

Վորոնեժու մենք ընդունում ենք, վոր գործունենք թույլ թթվի և թույլ հիմքի հետ, ջրածնին-իոնի և հիդրոքսիլիոնի մոլայնությունները պետք ե շափադանց փոքր լինեն, ուստի նրանց դորձնականորեն արհամարելով կստանանք՝

$$(HA) = (BOH), \quad (46a)$$

$$լուս h_A^- = h_B^+, \quad (47)$$

Այն ժամանակ (43), (44) և (45) հավասարութեառից ստանում ենք

$$\frac{h^2}{(1-h)^2} = \frac{K_w}{K_A K_B} \quad (48)$$

Հարթակովոր և նշել, զոր մու-ն (48) հավասարումից գուրա և ընկույտում, այսպես զոր այս դեպքում հիդրովիզի աստիճանը կախում չունի ապի հանցենատրացիայից:

Ուժեղ թթվից և թույլ հիմքից գոյացած աղի լուծույթի ջրածին-ի անմերի կոնցենտրացիան արվում և հետեւալ հավասարումով՝

$$(H^+) = K_{H^+}, \quad (49)$$

Ուժեղ հիմքի և թույլ թթվի աղի լուծույթի համար ունենք՝

$$(H^+) = \frac{K_w}{\ln M_0}. \quad (50)$$

ՃիմՇի բաօխումը նշելու բառների միջև— Այս պրոբլեմն առաջնորդում կարենոր նշանակության ունեցող հարց և համարվեր թանի վոր աղերմ ուժեղ կերպով դիտոցված են, ապա հարցի լուծումը հանդում և յերիւ։ Թթուների գիտոցման աստիճանները գտնելուն, յերբ նրանց ներկա յեն միասներ և վորոշ քանակությամբ հիմքի հետ միասին։ Այս գեղաքի համար մենք ունենք հետեւալ սարյակիումներական հարաբերությունը։

$$(B^+) + (H^+) = (A_1^-) + (A_2^-); \quad (51)$$

Հարցը հետաքրքրություն ունի միայն այն դեպքում, յերբ նա վերաբերում է յերկու թույլ թթուներին։ Մույլ թթուներին Մուտավորապես կարելի յե համարել, զոր

$$(B^+) = (A_1^-) + (A_2^-);$$

Թթուների գիտոցման համար (35a) հավասարման հիման վրա ունեց

$$(H^+) = \frac{1-\alpha_1}{\alpha_1} K_1, \quad (52)$$

$$(H^+) = \frac{1-\alpha_2}{\alpha_2} K_2, \quad (52a)$$

և

$$(A_1^-) = \alpha_1 M_1, \quad (53)$$


$$(A_2^-) = \alpha_2 M_2, \quad (53a)$$

վորանդ M_1 և M_2 տառին և համապատասխանութեն, յերկրորդ թթվի ընդհանուրը մուլյանություններն են լուծույթում։

Եերած հավասարութեներից կարելի յե հեշտությամբ արտաքսել (H^+) , (A_1^-) և (A_2^-) և այսուհետեւ α_1 -ի ու α_2 -ի նշանակությունները կարելի յե գտնել, յեթե հայտնի յեն (B^+) -ի, K_1 -ի և K_2 -ի թվական նշանակությունները Յերկու հիմքերի միջև մեկ թթվի բաշխման հարցը հանդում և հաշվարկման նույն յեղանակով յերկու հիմքերի գիտոցման աստիճանները գտնելուն։

Ամենաեւ նյարդեւ— Մի քանի նյութեր ունեն ինչպես թթու,


այսպես ել հիմնային հատկությունները Այսպիսի նյութերի դիտցումը կարելի յե պատկերացնել հետեւյալ հավասարութիւններով



$$\frac{(\text{H}^+) (\text{XOH}^-)}{(\text{HXOH})} = K_A, \quad (54\text{a})$$


$$\frac{(\text{HX}^+) (\text{OH}^-)}{(\text{HXOH})} = K_B, \quad (54\text{b})$$

Նման ելեկտրոլիտների տիպական որինակ և ալյումինիումի հիդրոքսիդը՝



Զանազան տեսակի մասնիկների եքզակտ ֆորմուլները հնարավոր չե գործեն, վորովնեաւ նրանց հիդրատացման աստիճանը հայտնի չե։ Անսահայտ ե վոր, ջրի դիտուցման հավասարակշռության դոյլության շնորհիվ, ամփուսեր նյութը կամ ամ ֆուլիտը չե կարող փոքր ի շատե նշանակալի աստիճանով ցույց տալ միաժամանակ և թթու և հիմնային հատկություններ։

Խօսոր խոնների համերաբանմանը Խզուկների կետը— Ցերկարայինք, թե լուծույթում մոլեկուլ կա, վոր բաղկացած և մեծ թվով ատոմներից, և այդ ատոմների թվում կան իոնանալու ընդունակ ջրածին-ատոմներ և հիդրոքսիլ-խմբեր։ Ցեթե իոնանալու ընդունակ այդ ատոմները մոլեկուլների ներսում բավականաչափ հեռու յեն միմյանցից, ապա նրանցից յուրաքանչյուրն իոնանում և անկախ մյուսներից և ջրածինու ու հիդրոքսիլ իոնների հավասարակշռությունն ամփուսեր մոլեկուլների հետ, կարուհայտվեն (54a) և համապատասխանորեն (54b) հավասարութիւնով։ Ըստ յերկույթին այսպիսի խոշոր մոլեկուլները լուծույթում չեն կարող լինել չդիտուցված վիճակում։ Նրանց լուծելիությունը ընույթով ելեկտրոքիմիական պետք ե լինի. Նա պետք ե պայմանավորված լինի այն բանով, վոր ջրի մոլեկուլները ձգվում են իոններին կամ լիցքերին, վորոնք հանգես են գալիս մոլեկուլի այն կետում, վորտեղից իոններն անջատվել են։ Այդպիսի նյութերի համար լուծելիության մինիմումը պետք ե համապատասխանի նրանց մոլեկուլների մինիմալ դիտուցմանը։ Անկախ Կ_A և Կ_B կոնստանտների մեծությունից՝ մինիմալ դիտուցումը պետք ե տեղի ունենա այն պայմանով, վոր



(55)

(555) և (556) հավասարութերի ողնությամբ կարելի յե ցուցը տալ, վոր այս պայմանն իրականանում է, յերբ լուծութիւն թու կամ հիմք ավելացնելու միջոցով ջրածին իոնների կոնցենտրացիան հավասարեցվում և հետեւալ մնանալու:

$$(H^+) = \sqrt{\frac{K_A \cdot K_B}{K_{B'}}}. \quad (56)$$

Այս պայմանով մոլեկուլի ընդհանուր լիցքը հավասար և գերոյի և այդ հանդամանքի շնորհիվ նա չի կարող անցնել լուծույթ, ուույնիսկ այս գեղգում և յերբ նա գտնվում և ելեկտրական դաշտում: Ջրածին իոնների այս կոնցենտրացիան, վորում մոլեկուլի ընդհանուր լիցքը հավասար և զերոյի, կոչվում և ի դուք է ի կար ի կ կետ:

Սպիտակուցները նստեցնելու համար սովորաբար ջրածին իոնների կոնցենտրացիան լուծույթում հասցնում են իզոնէլեկտրիկ կետին: Այս պայմանը նպաստում և նստեցման, վորովնետեւ իզոնէլեկտրիկ կետը հանդիսանում և նաև մինիմալ լուծելիության կետ: Խոշոր ամֆոտեր մալեկուլներ ունեցող նյութերի լուծելիության բացարձությունը սերտ կազմած և մոլեկուլի որինաման հետ ֆազերի միջերեսում, վորի մասին մենք խոսեցինք VIII դիմում:

Խոշոր ամֆոտեր մոլեկուլների հատկությունների մասին արած մեր յենթադրությունները, ըստ յերկույթին, փոքր և շատեւ իրականանում են ելեկտրոլիտիկորեն լուծվող կոլորդների գեղգում:

Սպիտակուցների մոլեկուլներն ամֆոտեր հատկություններ ունեն, ուստի և ցուցը են առավել ուռչում (հիդրատացիա) և զիստերում (լուծելիություն) ջրի մեջ. այս հատկությունները փոփոխվում են ջրածին իոնների կոնցենտրացիայի փոփոխման հետ մեկտեղ: Ջրածին իոնների վորոշ կոնցենտրացիայում, վորը կարելի յե ընդունել վորպես նրանց իզոնէլեկտրիկ կետ, այս յերկու հատկություններն ունեն մինիմում: Խոշոր մոլեկուլները, ի հարկե, ոպտիկորեն հոմոգին լուծույթներ չեն, քանի վոր նրանց մոլեկուլներն իրենց չափսերով մոտենում են միկրոսկոպիկան տեսանելիության առանձնին:

Ոճառներն ամֆոտեր նյութեր չեն, սակայն, ինչպես յերկում ե, նրանց բացասական իոնները ներկայացնում են իոնների և չեղոք մոլեկուլների ազրեղատաներ: Այսպիսի գոյացությունը կոչվում և միցելլ: Կոլլոիդ մետաղների կայունությունը հավասորեն, պարտական և ելեկտրոլիտաների հետքերի ներկայության: Ի ո՞նչ ե ը ի մի այս մի ա և ս կն ե ա դ ս ո ր բ ց վ ու մ (բացառական կամ մուկան), կոլլոիդ մասնիկների կողմից և այդպես գոյանում են լիցքավորված կոլլոիդ մասնիկներ: Նրանց լիցքերը փոփոխվում են ներկա աղերի:

կոնցենտրացիայի փոփոխությոց և մետաղները կարող են նստեցվել կոլորիդ լուծույթից՝ սրա մեջ կոլորիդ սասանիկների լիցքերը չեղոքացներու համար անհրաժեշտ կոնցենտրացիաներով վորոշ իմմներ մտցնելով։ Այս յերեսույթը նման և ամֆոր լի և առ և ը ի նստեցմանը իզունիկութիկ կետում։ Կարելի յեր սպասել վոր ներժուծած ելեկտրոլիտից կոլորիդ մասնիկն ազուրրում և այն իրաները, վորոնց լիցքերը հականանին են իր լիցքերին, բայց աղոստրը համար կախված չեն միայն լիցքի նշանից, իոնների աղոստրը համար կախված և սպեցիֆիկ քիմիական եֆֆեկտ ներից վարոնց պատճառով, յերբեմն նույնիսկ աղոստրը վուամ են մասնիկների լիցքին նույնանից իոններ՝ հակառակ ելեկտրոստատիկ վանման ուժերին։ Սա առաջացնում և կոլորիդ լուծույթի կայունություն, քանի վոր կոլորիդ մասնիկների լիցքը ձգտում և պահել մասնիկները վորոշ տարածության վրա մեկը մյոււից, վորովհետեւ վանման ուժերը խոչնորա են դառնուում նրանց միջանց մոտանալու Տեղի յն ունենուած աղոստրը հայի հավասարակշռություն, վորը նման և դիտոցման հավասարակշռության և աղոստրը վուամ և լուծույթում պարունակված իոնների միայն վորոշ բաժինը։ Այդ բաժինը փոփոխվում և նույնիսկ միննույն վալենցի տարրեր իոնների համար, այսպես, վոր աղերի ընդհանուր կոնցենտրացիան, վորը պետք և սանդենի լուծույթում, վորպահսի կորորիդ մետաղը նստեցվի, տարրեր աղերի համար տարրեր ե, յեթե մինչեւ անգամ սրանք գոյացած են միանման վալենց անեղող իոններից։ Հիմք կա յինթառընթու, վոր իոնների հիդրատացման աստիճանը նշանակալիորեն ազգում և նրանց կոագուլոր ընդունակության վրա. ամենաուժեղ հիդրատացված իոնները հանգիս են բերում ամենափոքր եփփեկտիվաթյուն նստեցման տեսակներից կոլորիդը նստեցնելու ընդունակությունը շատ նշանակալի տասիճանուով կախված և աղոստրով իոնի լիցքից։ Այսպես, որինակ, արգենինի սուլֆիդը, վորը հանդես է դալիս, վորպես բացասական լիցք ունեցող կոլորիդ, նստեցվում և կալցիֆաւմի աղի շատ ամեն փոքր քանակությամբ, քան թե նույն նստեցման համար նստրիսումի աղ և պահանջվում։ Այս յերեսույթը հեշտ և հականալ թաղմավալենտ իոնների ավելի ուժեղ ելեկտրական դաշտերի առկայությունը պայմանավորում և կոլորիդ մասնիկները կոագուլելու նրանց ավելի մեծ եփփեկտիվությունը։ Մի քանի հեղինակների կարծիքով առանձին իոնների կոագուլող կարողությունը համեմատական և նրանց լիցքերի քառակուսուն։ Յեթե մեկ դրականորեն լիցքավորված կոլորիդ խառնվում և մեկ բացասականորեն լիցքավորված կոլորիդի հետ, ապա նրանք նստեցնում են միջյանց։

Հարկավոր և նկատի ունենալ, վոր կոլորիդի վարքի պատերը, վեր մենք հիմա տվեցինք, վերին աստիճանի պարզեցրած եւ կոլորիդների մեծ մասը շափագանց բարդ և փոփոխական նյութեր են, և նրանց

հասակությունները հասարաւկ թեսրիայով ամբողջովին բացատքել չի կարելի: Թիշ առաջ շարադրած թեսրիան, ինտրիկն, իտններ բոլորովին չպարունակած կոլլարի լուծույթներին, մնջակն, որինակ, առաջյի լուծույթին, կերպառել չի կարելի: Վաչ երեկորդի կորուն լուծվող կոլլույթները, սպարաբար ունեն գիտության ստրուկտորով խոշոր մողեկուներ, զիրոնք պրոյեկտներանալու և լուծույթի մոլեկուլների նետ կոմպլեկսներ դրացնելու: Հակում ունեն: Լուծված մորմել և լուծելիք մոլեկուլների միջն պոյություն ունեցող այս ձգողությունն և, զոր հարկագուռ և կոլլույթներին գիրապերաված վիճակում մնալու լուծույթում: Հաս յերեսույթին ժեզ կոչվող նյութերի գասը պատկանում և այս ախորին:

Լուծիչի հետ ցեղակցության ունեցող կոլլույթները սպարաբար ընօպւնված և անվանել չեն ո թի ի լն ե ը: Ըստհակառակը. այնպիսի կոլլույթները, ինչպիսիք մետազների զույրն են, կոչվում են չի ո թի ո ը ն ե ը սրանով ցանկանալով ընդդեմն, զոր ձգողական ուժերը կոլլույթի և դիսպերսիոն միջավայրի միջն բացակայում են:

«Ելուսիոր կոլլույթ» տեսրմինը տրամադրանորնն շիտակ չեն, գոնե մետազների զույրի գիրաբերմամբ: Նու զործածության մեջ և մաել այն ժամանակի, յերբ որինակ, վասկու զայր բացկացած եր համարվում վուկու մատնիկներից, զորոնք գիրապերաված լինելով մաքուր ջրի մեջ, իբր թե կրում են միննությ նշանի լիցք: Ներկայումս յեկել են այն յեղբակացության, զոր վասկու մատնիկների լիցքը պայմանավորված և աշխարհոված իւնենությով և յուրաքանչյուր ազարդրված իոնին լուծույթում համարակատասխան հակառակ նշանի մյուս աղատ իոնն կա: Հավանական ե, զոր «Ելուսիոր» տեսրմինն ամենայն իրավունքով կարելի յն կիրառել այնպիսի կոլլույթներին, ինչպիսին ե, որինակ, նատրիումի քլորիդի կոլլույթ լուծույթը բնազով մեջ:

Ցեթե լիոֆիլ կոլլույթը, այսպես կոչված լիոֆոր կոլլույթին և ավելացվում, սպարաբար վերջինիս կայունությունը բարձրանում եւ: Այս հիֆեկտը հավանաբար պարուական և այն ըանին, զոր լիոֆոր կոլլույթի մատնիկները պարուրվում են լիոֆիլ նյութով: Լիոֆիլ նյութերը, զորոնք բարձրացնում են լիոֆորների կայունությունը, ստացել են պաշտպանություն կուլութի ո դ ն ե ը անունը:

Ցաւցերային լուծույթներ— Ցենթրոգրանք, թե հազար զրամ ջրի մեջ լուծում ենք մեկ մոլ նատրիումի ացետատ և մեկ մոլ քացախական թթու: Նատրիումի ացետատը մենք համարում ենք լինիլ դիսոցիում: Իսկ քացախական թթվի դիսոցման կանոնանորը համաձայն 31 աղյուսակի, $1.8 \cdot 10^{-3}$ եւ Այս պատճառով մենք կարող եյնք սպասել զոր, նույնիսկ նատրիումի ացետատի քացախայությամբ, նա պիտք և դիսոցմի վոչ ազելի քան մեկ տոկոսով, իսկ նատրիումի ացետատից դոյացած ացետատիոնի ներկայությամբ նրա դիսոցումն ի հարկե:

սպետք և ավելի նվազի: Այ պատճառով, ընդունելով, վոր ակտիվության գործակիցները հավասար են 1-ի, առըսեր տեսակի մասնիկների կոնցենտրացիոները հետեւյալը կլինեն:

$$(\text{Na}^+) = 1$$

$$(\text{A}^-) = 1 \quad (57)$$

$$(\text{HA}) = 1$$

Հեմա հաշվենք ջրածին-իոնների ակտիվությունը: Նա պետք է վորոշի քացախական թթվի խոնացման հավասարակշռությամբ, որը կարելի յե գրել հետեւյալ հերթու:

$$(\text{H}^+) = \frac{(\text{HA})}{(\text{A}^-)} \cdot 1,8 \cdot 10^{-5}. \quad (58)$$

(57) հավասարումից համապատասխան արժեքները տեղադրելով այսուղ գտնում ենք՝

$$(\text{H}^+) = 1,8 \cdot 10^{-5}$$

Հեմա յենթադրենք, թե մենք լուծույթին ավելացրել ենք նատրիումի հեղողացիոնի կես մաս վերջինս քացախական թթուն նատրիումի ացետատի կվերածի: Անհրաժեշտ ե վորոշել թե վորքան լրիվ կընթանա այս ռեակցիան: Սրա համար մենք կարող ենք (58) և ջրի գիսոցման (32a) հավասարումներից կազմել հավասարումների մի սխալմ և լուծելով այն, ճշտի հաշվել՝ 0,5 մոլ նատրիում հիդրօքսիդ ավելացնելուց հետո ստացված կոնցենտրացիաները, Սակայն, ավելի պարզ պատկերացում այն մասին, թե ինչ ե տեղի ունենում լուծույթում, տալիս ե դատղության հետեւյալ յեղանակը: Յենթադրենք, թե քացախական թթվի մոլի կեսը ռեակցիել ե, գոյացնելով նատրիումի ացետատ: այդ ժամանակ մենք կունենանք՝

$$(\text{A}^-) = 1,5$$

$$(\text{HA}) = 0,5$$

Տեղադրելով, առաջիւ պես (58) հավասարման մեջ, զտնում ենք

$$(\text{H}^+) = 0,6 \cdot 10^{-5}$$

Հյուս կողմից, յեթե՝

$$(\text{H}^+) = 0,6 \cdot 10^{-5},$$

առաջ

$$(\text{OH}^-) < 2,0 \cdot 10^{-5}.$$

Առ ցույց և տալիս, վոր լուծույթում փոքր ի շատե համարելի բանակությամբ նատրիումի հիդրոքսիդ մալ չի կարող ։ Նատրիումի ացետատի գոյացման ռեակցիան գործնականորեն այսպիսով հասակ մինչեւ վերջը։

Նատրիումի ացետատ և քացախական թթու պարունակող մեր լուծույթին կես մոլ ուժեղ հիմք ավելացնելը ջրածինի բռնիւթյան մեծությանը փոխեց՝ $1,8 \cdot 10^{-3}$ -ից մինչև $0,5 \cdot 10^{-3}$ ։

Այս պափոխությունը հաղիկ թե հարավոր լինի հայտնարերել ուժիւրական քիմիական մեթոդներով։ Այսպիսով, ըստ ֆերային լուծույթին իր թթվությունը կամ ալկալայնությունը պահպանում և շատ նեղ սահմաններում։ Յեթե մենք լուծույթին, վորի մասին ցիչ առաջ խոսվեց, ավելացնելինը մեկ մոլ նատրիումի հիդրոքսիդ, առայ քացախական թթվի կոնցենտրացիան կհավաքվեր 0-ի և գրանից հստո, ինչպես յերեսում և (58) հավասարումըց, ջրածինի խոնների կոնցենտրացիան կարող կլիներ անսահմանափակ կերպով փոփոխվել։

Թույլ թթու և նրա նատրիումի աղ պարունակող լուծույթի այլ քանակությամբ թթու կամ հիմք ավելացնելը կառաջացնի, ինչպես ջրածին այսպէս ել հիդրոքսիլ-խոնների ակտիվությունների միևնույն առեստուց յին փոփոխություն, անկախ (H^+)-ի թվական մեծությունից ($H^+ = 10^{-3}$ -ից մինչև $(H^+) = 10^{-9}$ ինտերվալում, վորանդ լուծույթում պարունակված ջրածին և հիդրոքսիլ-խոնների քանակությունները բավական փոքր են, այս խոններից յուրաքանչյուրի ակտիվության կրկնակի և նույնական յառակի փոփոխութերը զործնականորեն մեանգամացն աննշան են։ Պրանով ել բացարվում և լուծույթի թթվանության և ալկալայնության առյունութական հաստատությունը։

Բաֆերային գործողությունը մեծապույն կարևորություն ունի վորանդեակե նա ապահովում և հեղումների չնպացությունը կենսանի որդանիքներում։ Այսպես, շնորհիվ արյան մեջ ներկա բիկարբոնատների և ածխածնի բիոքսիդի այլն HPO_4^- և $H_2PO_4^-$ իոնների, ջրածնի խոնի ակտիվությունը պահպանում և 10^{-7} -ին մատ։

Խ ն դ ի կ ա ռ ո ր ն և ր— Ջրածին-խոնների կոնցենտրացիան մեծ տատիճանի ճշառությամբ կարելի յն վորոշել ջրածների կարողությունը, վորի մասին մենք կխոսնենք XI գլուխում։ Այս նպատակի համար ջրածների կարություն առաջարկված և յեզել համեմատարար մոտ անցյալում։ Բացի այս, նրա կիրառման համար բավականին բարդ երեկարական սարքավորում և պահանջվում Ռեակցիայի վերջանալը վորոշելու ստան-

գարտ մեթոդը ծավալային անալիզում քիմիական ինք ի և տուր ներից ողբավելու և Խնչութեամբ մենք արդեն առել ենք, ինդիկատորները շատ ել զգայուն չեն: Գումավորման փոփոխութեամբ առաջացնելու համար պետք է ջրածին խոնների կոնցենտրացիան փոփոխել մի քանի անգամ: Խնդիկատորները ցույց են տալիս, վոչ ավելի, քան ջրածին-խոնների կոնցենտրացիայի մեծության կարգը Սովորաբար ինդիկատորները բարդ որգանական միացություններ են, վորոնց անհնարինությունները Ալկալային միջավայրում ինդիկատորներն աղեն գոյացնում: Ներմուծելուային վերախօսությունների հետևանքով անդի յի ունենում կլորաման սպեկտրը տեղաշարժ և թթվից աղի փոփով երևում ինդիկատորը փոխում է իր գույնը: Գումավորման փոփոխության մոմենտը համընկնում և թթում աղի փոխարկման պրոցեսի վրոշ ստադիայի հետ: Մի քանի ինդիկատորներ, որինակը, մեթիլ-որանթթվը, գումավորման յերկու փոփոխում ունեն, սակայն այսպիսի ինդիկատորները վոչ կատարելաւորեն բավարար են: Գործնական նպատակների համար ինդիկատորը կարելի յի սահմանել, վորովեն մի նյութ, վորը վոչ մեծ քանակությամեներով ներկա զանվելելով լուծույթում փոխում է իր գումավորմանը՝ ջրածին-խոնների կոնցենտրացիայի փոփոխման վահաններում:

Խնդիկատորների ցուցակը և գումավորման փոփոխությունների սահմանները տրված են 33 աղյուսակում:

Աղյուսակ 33. 1 մ դ ի ա ս ո ր Շ ե ր

Գումավորման փոփոխությը աղի յի ունենում ջրածին-խոնների կոնցենտրացիայի սահմանը ցույց տված սահմաններում:

Ինդիկատոր	pH	Գումավորման փոփոխությը (թթու-կաղ)
Մեխիլ-որանթ.	3,1—4,4	Կարգազույն—դեղին
Մեթիլ-բոռ	4,2—6,3	Կարմիր—դեղին
Նեյտրոլ-բոռ	6,8—8,0	Կարմիր—դեղին
Ֆենոլ-ֆուուելին	8,3—10	Անգույն—կարմիր
Բիսոլ-ֆուուելին	9,3—10,5	Անգույն—կարմույտ

Թրումերի յակ հիմների պիտույքը: Ուժեղ թթվի ախտրումը ուժեղ հիմքով կամ ընդհակառակը՝ շատ հասարակ պրոցես և ինդիկատորի ընտրությունն այնքան եյական չե, յեթե միայն նրա գումավորման փոփոխությը տեղի յի ունենում (H^+) = 10^{-4} և (H^+) = 10^{-10} սահմաններում:

Վորպես - որինակ, ռևումիասիրենք նատրիումի հիդրօքսիլի ախտրումը նորմալ աղաթթվով: Յեթև ընդունենք, վոր լուծույթի ընդհանուր ծավալը տիտրման վերջում հավասար կլիմի 0,1 լիտրի, ապա թթու տիտրացնելուց՝ ջրածին-իոնի ակտիվությունը զանգաղորեն կփոխվի մինչև վոր նատրիումի հիդրօքսիլի քանակությունը նվազի մինչև 10^{-5} մոլի, ինչ վոր համապատասխանում է (H^+) = 10^{-10} , Սրանից հետո նորից 0,01 մլ թթվի ավելացումը կառաջացնի ջրածին-իոնի ակտիվության փոխարկում մինչև 10^{-4} .

Մասն կողմից, թույլ թթուն ուժեղ հիմքով, կամ թույլ հիմքը ուժեղ թթվադ տիտրելիս՝ ինդիկատորի ընտրությունը մեծ զգուշացություն և պահանջում: Սովորաբար գործազրվող ինդիկատորների գունավորութեարի փոփոխումը անզի յև ունենաւմ (H^+) = 10^{-4} և (H^+) = 10^{-10} սահմաններում: այդ մունենաւմը լուծույթում ներկա յեղող ջրածին կամ հիդրօքսիլ իոնների քանակությունն արհամարելի յև Գերաբորելու վոչ մի վասնգ չի կարող լինել, յեթև տիտրումն ընդհանենք գունավորման փոփոխման հենց մունենաւմն ընդհանառակը, յեթև անհամապատասխան ինդիկատորներ գործազրվեն վասնգ կլիմի, վոր տիտրումը կվերջանա ազելի շուտ, քան պեսք և Պննարկենք թույլ թթվի տիտրումը նատրիումի հիդրօքսիլով: (H^+) = 10^{-4} մինչև (H^+) = 10^{-10} մուներվարում մենք ունենք

$$(\text{Na}^+) = (\text{A}^-)$$

Հավասարումը, յեթև միայն լուծույթն ուրիշ իոնների նշանակալիք քանակություն չի պարունակում: Սակայն եքզակտ տիտրման դեպքում, նատրիում իոնի մոլայնությունը պետք և հավասար լինի թթվի ընդհանուր մոլայնության և լուծույթում կարող և զեռ չդիմոցված թթվի վորոշ քանակություն ներկա դանվելը թթվի դիտուման հավասարակըշության հավասարումը կարելի յև զբել հետեւյալ կերպ:

$$\frac{(\text{HA})}{(\text{A}^-)} = \frac{(\text{H}^+)}{\text{K}_\text{A}}, \quad (59)$$

(59) հավասարումը ցույց և տալիս, վոր թթվի չտիտրված բաժնը հավասար և ջրածին-իոնի ակտիվության և թթվի դիտուման կանունատիք քանորդին: Ուստի սովորական ծավալային անալիզում սպասելի ճշտությունն ստանալու համար, հարկավոր և ինդիկատորն ընարել այսպես, վոր (H^+)/ K_A հարարերությունը 10^{-3} -ի հավասար լինի կամ զրոնից ավելի փոքր լինի:

Նման արտահայտությունն ստոցվում և թույլ հիմքը ուժեղ թթվով տիտրելու դեպքում:

$$\frac{(\text{BOH})}{(\text{B}^+)} = \frac{(\text{OH}^-)}{\text{K}_\text{B}} = \frac{\text{K}_\text{w}}{(\text{H}^+)\text{K}_\text{B}} \quad (60)$$

Հիդրօլիզի վերաբերյալ արտե կշռապատճերի հիման վրա, կա-

բերի յև յեզրակացնելու վար թռույն թռույն հիմքով չի կարելի պարել:

ԱՌԵՒ վարուման հիմքը ըստ քաղաքացի թերթի Յերր մնաց այս պահի սկզբում՝ ակտիվության գործակցի գաղափարը մտցրինը, նույն տեղում ընդուժեցինք, վոր փորձնական ճանապարհով կարելի յև վորոշել ակտիվության գործակիցների մի չին մեծությունները, իսկնամերի գորյակի համարը ջրածինների ակտիվության մասին վերը բերած գատապահոյունների կապակցությամբ այդ ճանապահները հարկավոր և միանգում եւ ընդգծելու մնակախ այն բանից, թե վոր մեթոդով սկսվենք ջրածինների էկոնոցեարացիան վորոշելու համար, միակ մեծությունը, վոր մատչելի յև անմիջական վարույթան, ուս ջրածինների և նրա հետ կապված իրոնի միջին ակտիվությունն եւ Այս մեծությունից ջրածինների մանաւական ակտիվությունը հաշվարկելին, հարկ և լինում դիմել դանապան յենթադրությունների Այս յենթադրությունների բնույթի մասին մանրամասնորեն մնաց կիսունք ԽI դիմում:

ԽՆԴԻՐՆԵՐ

1. Նաոսրիումի առևտությունից լուծելիքը դարձնակում և $20^{\circ}/\text{o}$ Na_2SO_4 ըստ կըսի Նրա խոռոքյանը $20^{\circ}-\text{ամ}$ հավասար և 1,1915-ի. Արտահայտել կանցկացուցիչն հետեւալ ձեռքբար:

ա) գրամմերով 100 զրոյ լուծելիք մեջ, ը մոլար բառիներով, զ) մոլարությամբ ըստ կըսի, զ) ծավալուցին նորմալությունը և յեւ ծավալուցին մոլարությունը:

2. MgSO_4 -ի լուծելիքի ծավալությունից մորոյնությունը $0,169$ և և խոռոքյանը $1,0180$: Հարցուրկել մոլարությունը ըստ կըսի:


3. Արծութիւնը լուծելիքությանը հավասար և 10^{-3} մոլի մեկ լիուրում Հարցուրկել ործաթիւ թուրքի լուծելիքությունը կայիտում նիստառակի 0,1 մոլար լուծույթում, կայլումի թուրքի 0,1 մոլար լուծույթում և կայլումի սուլֆումի 0,02 մոլար լուծույթում:

Գառափական՝ $1,25 \cdot 10^{-3}$, $1,56 \cdot 10^{-3}$, $1,2 \cdot 10^{-3}$,

4. Բարիումի սուրբառի լուծելիքությունը հավասար և 10^{-3} մոլի մեկ լիուրում Բարիումի կարբոնատի լուծելիքությունը հավասար և $5 \cdot 10^{-3}$ մոլի մեկ լիուրում: Հաշվարկել հատորիումի կարբոնատի և նաոսրիումի սուլֆումի կայսկառացիւների հարութեաթյունը՝ լուծույթում, գորում բարիումի սուլֆումը փախվում և բարիումի կարբոնատի:

Գառափական՝ 23 : 1


5. Թէսր-ջրածին գույքի և նրա լուծույթի միջև հավասարությունը կայելի յև արտահայտել:



Հավասարությունը՝ 37 այսուհետ (ԽI դիմում) բերվում են առընդ ինների աղյուսականները սունդար վիճակում (յերբ ակտիվությունը հավասար և մեկի):

Y դիմք (20) հավասարության պահանջանքը հաշվարկել վեցը ըերգած սետիցիոնի հազարամյական կանոնակաց թույզ տար վեր առաջընթացի պարզիության իր 0,1-մարդ չափանիմի վրա հավասար է $8.8 \cdot 10^{-6}$ մ.

5. Հաշվարկել ΔF° և հավասարակշռական կանոնակաց համերայ սետիցիոնի համար՝



$$\text{Պատասխան՝ } K=0,00345 .$$

Խեղովիսի կոնցենտրացիա պես և անձնա ուղարկության թթուն չըստի ըստուրամական համար միանիլիության մեջ լինելիս Բ'նչ հիմուն վրա այս սետիցիոն չափը կարելի յէ շնորհանել զարդեա մարզաց նյութը .


7. Սողի բանելիությանը չըստ 250-ում կարելի յէ հաշվարկել 37 ապրանքի ամրաներից.

$$J_{\text{պայմանական}} [J_1]=K , \quad \Delta F^\circ=3.226 .$$

Սողի ակտիվությանը լուծույթում կարելի յէ շնորհանել նրա մոլայնությանը հավասար.

8. 37 ապրանքիում չըստին-իսնի ազատ հներգիուն, յերբ ակտիվությանը հավասար և մեկի, շնորհանված և զերսյի հավասար հաշվել չըստին-իսնի ազատ հներգիուն աղաթիթի 0,1 մոլաց լուծույթում.

9. Հաշվել համերայ սետիցիոնի հավասարակշռական կանոնակաց, սպազմեալ 17 և 37 ապրանքիների ամրաներով.



$$\text{Պատասխան՝ } 1.2 \cdot 10^{11} .$$

10. Բնաուր և կիրածման աղաթիթի առընդեմ կորբեր կոնցենտրացիաների լուծույթներում C 250-ում քրոս-ջրաների զարդար մնաման համար զարդ են համերայ կանոնականները՝

Մոլայնու-	մնամանը	Մոլայնու-	մնամանը
թյանը	(առանձ). 10^4	թյանը	(առանձ). 10^4
4	0,2295	8	11,10
5	0,6974	9	25,39
6	1,842	10	55,26
7	4,570		

Հաշվել աղատ հներգիունի գոփախուճը՝ 1 մոլ թթույթաներ անհանձման մեջ ըստ համակարգ 4 մոլաց լուծույթից անհանձման մեջ ըստ համակարգ 8 մոլաց լուծույթի մեջ զետուիլիս ինչնաւ լուծույթների ըստ համակարգություն հարկավոր և շնորհանել անհանձման մեջ.

11. Այս հավասարության պահանջանքը.

$$\Delta F = RT \ln \frac{[H^+] [Cl^-] 8,0m}{[H^+] [Cl^-] 4,0m}$$

առայց տալ, վեր 8 մոլաց թթույթաների ակտիվության զարժանելից պես և հավասար մեջ 6-ի Ոգուզգործել համարդ ինդիքի և 37-րդ ապրանքի ամրաները.

12. Հաշվել հների սրբների կանոնակաց՝ թթու-ջրաների առընդեմ կոնցենտրացիաների համար ըստ, 10-րդ ինդիքում քերզած, ապրանքակին.

13. Գացախոկան թթվի 0,1 մոլոր լուծույթում գեր առկան և պիտոքված, թաղթ յեւ հավասար ջրածին-իսկների կանցկարացիան:

14. Թաղթ յեւ հավասար ջրածին-իսկների կանցկարացիան 1 մոլ մանենաբիում և մեկ մոլ պիտօքարիում գործառի լուծույթում 2000 գրամ շրջ մեջ: Թաղթի կայլի ջրածին իսկնի կանցկարացիան, յեթե լուծույթին ավելացված լինեն, այս հատրիում կետ մոլ և ը թուր-ջրածին կետ մոլ:

15. Հաղթել հիդրօլիզի առաջնանն ամենիւմի թւրիզի 1,0 և 0,01 մոլոր լուծույթներում:

16. Հաղթել հիդրօլիզի առաջնանն ամենիւմի ացետատի 0,1 մոլոր լուծույթում:

17. Հաղթել ջրածին-իսկնի կանցկարացիան նաուրիումի ացետատի 0,1 մոլոր լուծույթում:

18. Կորընհատները թթվով ախարելիս, ախարում ազուրարար կատարում են դեռնացընեւինի ներկայացյամբ, թթվուն ավելացնեմ են մինչև զանավարման անշահացումը և նետ ավելացնեմ են մեթիլորունդ և ախարումը շարունակում մինչև զերչ:

Հաղթել

$$\frac{(\text{HCO}_3^-)}{(\text{CO}_3^{2-})} \quad \& \quad \frac{(\text{H}_3\text{CO}_3)}{(\text{HCO}_3^-)}$$

Հարաբերությունները ախարժան առաջին փուլի վերջում:

Հաղթել

$$\frac{(\text{H}_3\text{CO}_3)}{(\text{HCO}_3^-)}$$

Հարաբերությունը ախարժան յերկրորդ փուլի վերջին կետի համար:

ԵԼԵԿՏՐԱՏԱՐՈՒԹՅՈՒՆ

Մեռագների և լեկտրատարությունը Մեռագներն ելեկտրական հոսանքի լուվ հաղորդիչներ են, բնշպես կարծը, այնպես ել հեղուկ վիճակում Ելեկտրական հոսանքի անցումը մետաղի միջով վորոն շոշափելի փոփոխություն չի առաջացնում; Կրանց Փիզիկական կամ քիմիական հատկություններում, և այս ֆակտը հիմք դառնավ այս անհույսայն, վորի համաձայն Ելեկտրականություն փոխադրողը մետաղների մեջ «առատ» ելեկտրոններն են, վորոնք շարժվում են տարածական ցանցի առանձների միջև և անցնում են մեկ առանձին մյուսին՝ տանց մեծ դիմագրության հանդիպելու վազ ժամանակներում պայմանաբար ընդունում ելին, վոր մարտկոցի յերկու ընեւները միացնող լորի միջոցով հոսանքն անցնում և դրական ընեռից գեղի բացառական, Բայց, քանի վոր Ելեկտրոնը բացառական լիցք ե, պարզ ե, վոր իրականում Ելեկտրականության տեղաշարժը կատարվում է հակառակ ուղղությամբ:

Նյուրի հետակարար Ելեկտրատարությունը (Ելեկտրական հաղորդականությունը) չափվամ է Ելեկտրականության այն բանակությամբ, վար մեկ վարկյամում նօսում և մեկ բառակիությունում լայնական կարվածք ամենազարգացած միջուկ՝ լայնական կարվածքի մակերեսին նաև առաջարյանը, յերբ պատճենցիալի գրադիենտը նավասար և մեկ վարկյամում մեջ գործությունը վորոշվում է նույն ձևով, այն տարրերությամբ, վոր այստեղ խոսքը վերաբերում է ջերմության քանակությանը, և վոր վորոշես տեմպերատուրայի դրազդենստ այստեղ ընդունվում է մեկ առ տի ճան ը մեկ առնատիմետրի վրա: Ելեկտրականության տեսակարար դիմագրությունը՝ տեսակարար Ելեկտրափարության հակառակ մեծությունն եւ:

Առենամեծ Ելեկտրատարությունը ունեցող մետաղների տեսակարար դիմագրությունը 10^{-8} ոմ կարգի մեծություն է $C\ 25^{\circ}$ -ում, վորը տեմպերատուրայի նվազման հետ նվազում եւ բացարձակ տեմպերատուրին մո-

առավերապես համեմատական թարգի կամմերլինց-Ռննեսը (1912) ցույց է տվել, զոր հեղուկ հելիումի անդաբերատարաւմ մի քանի մետաղների զիմազդրությունը նվազում է և զարնում անշափելի փոքր, կազարի լարի փակ կոնտարի մեջ Կ 5^o-ում առաջացրած հոսանքը կարող է շարունակվել ժամերի ընթացքում: Դեռև է եկա բառա ըությունը, ինչպես անվանում են այս յերևույթը՝ մազնիսական գաշտի աղդմամբ անհետանում եւ: Նոր քվանտային մեխանիկան դերեւնիստարարության յերևույթը բացարաւմ է ելեկտրոնների փոխազդմամբ: Սակայն մինչև այժմ այս յերևույթի ճիշտ և մանրամասն թեորիան չկատ:

Անդամառարքանը (գերմանակազմանը ըստ Վ. Հոգեմաննի հետամասնությանը) ցնի Վ. Հոգեմաննի հետամասնությանը Ամենաբարձր ելեկտրատարություն ունեցող մետաղների չերմատարությունը C25^o-ում մասսավորապես հավասար է 1 կալ. 1^o-ի համար 1 ում զրա: Տեմպերատուրայի նվազման հետ չերմական զիմազդրությունը ընկում է, սակայն նրա տեմպերատուրային զորժակիցն ամենաին այնքան մեծ չե, զորքան ելեկտրական դիմադրության անդաբերատուրային զորժակիցը: Բացի այդ, բացարձակ զերոյին մոտենալիս, չերմական դիմազդրությունը բոլոր դեպքերում ձգտում է զորոշ վերջնական մեծության: Յեթե հակառակ վատաերով արտահայտված չերմական դիմազդրությունը նշանակենք չ-ով, իսկ հակառակ վատաերով արտահայտված ելեկտրական դիմազդրությունը՝ ա-ով, առա մի շարք մետաղների համար, հատկապես ցանք տեմպերատուրներում, կարող ենք գրել հետեւյալ հավասարումը, բավական մեծ ստորենայի ճշտությամբ:

$$\frac{w}{x} = 2,2 \cdot 10^{-47}$$

(1)

Այս հավասարումը հենց արտահայտում է Վ. ի գ և մ ա ն - Ֆ ը ա ն - Շ է ո ր ե ն ք ը Յերը մետաղը տաքացրած և մինչ բարձր տեմպերատուրան՝ նրա մակերեսից ելեկտրոնները գորորշիանում են և կարող ե նաև առավել հավասարակշռություն, փորին կարելի յե կիրառել VI զվարակությունը նաշման համար դուրս բերված հավասարումը: Այս յերևույթի ուղղակի հաստատում է, զոր մետաղների մեջ ելեկտրականության փոխազդրողները ելեկտրոններն են: Ելեկտրոնային գորորշին կարելի յե նկատել վորպես զագ, սակայն, չնորհիվ այն հանգամանքի, զոր ելեկտրոնների միջև գործում են վանման նորը ուժեր, նրանց գորորշը խառնությունը պետք է շատ փոքր լինի, վորպեսզի II զվա. (8) հավասարումը կիրառելի գաւնա:

Դազերի ելեկտրատարքանը Ելեկտրական հոսանք կարելի յե ստեղծել նույնիսկ բարձր վակուումում, յեթե ելեկտրոդներից մեկը շիկացրած լար լինի, ինչպես այդ անդի ունի կուլիջի ըրճագինյան

